



# GLOBAL SPC

---

BUSINESS & LEGAL CONSULTING



# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՋՈՑ (ԱՌՈՒՄ)ՆԵՐ

Զեկուցող՝ Գևորգ Թորոսյան



# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՋՈՑ(ԱՌՈՒՄ)ՆԵՐ

Հակազնազցման

Փոխհատուցման

Պաշտպանական



## Հակագնագցում = Հակադեմփինգ

Հակադեմփինգային  
(հակագնագցման) միջոցները  
կիրառվում են **դեմփինգային  
(գնագցող) ներմուծման** նկատմամբ

Դեմփինգ կարող է առաջանալ եթե որևէ  
ընկերություն արտաքին շուկայում  
ապրանքը վաճառում է **չհիմնավորված  
ցածր գնով** ներքին և այլ արտաքին  
շուկաներում նույն ապրանքի վաճարքի  
գնի համեմատ



# Դեմփինգը որպես դրական երևույթ

Ներքին  
շուկայում կարող  
են լինել խաբեր  
որոնք կշահեն  
դեմփինգի  
իրականացումից

- Վերամշակող ձյուղերը  
կշահեն հումքի  
դեմփինգային  
ներմուծման  
պարագայում  
(Հայաստանում բնական գազի  
ներմուծումը Ռուսաստանից)



# Ռեմֆինգը ներքին արտադրողի կողմից

**Ներքին  
արտադրողի  
կողմից  
չհիմնավորված  
ցածր գնով  
ապրանքի  
վաճառքը  
ներքին  
շուկայում**

- Տնտեսագիտության տեսանկյունից սա ռեմֆինգ է
- Իրավունքի տեսանկյունից սա ոչ թե ռեմֆինգ է, այլ անբարեխիղճ մրցակցություն կամ գերիշխող դիրքի չարաշահում
- Այս երևույթը կարգավորվում է Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության շրջանակներում



# Օրենսդրական կարգավորում

Հակադեմֆիինգ  
(հակազնազցման)  
մասին  
**առաջին օրենքը**  
ընդունվել է  
ԱՄՆ-ում 1897 թ.-  
ին

**Միջազգային  
մակարդակով**  
առաջին  
կարգավորման  
փորձը  
կատարվել է  
ՄԱԳՀ/GATT  
շրջանակում  
1947 թ.-ից սկսած

**Հայաստանում** 2002  
թ.-ին ընդունվել է  
Հակազնազցման  
(հակադեմֆիգային)  
և փոխհատուցման  
միջոցների մասին  
օրենքը



# Կարգավորումը ՄԱԳՀ/ԱՀԿ-ում

1947 թ.-ին հաստատված ՄԱԳՀ / GATT պարունակում է հողված գնագցման (դեմֆինգի) և հակադեմֆինգի մասին

1967 թ.-ին ՄԱԳՀ բանակցությունների Քենեդիի փուլի ընթացքում ստորագրվել էր Հակադեմֆինգի վերաբերյալ կանոնակարգ

1979 թ.-ին Տոկիո փուլի Հակադեմֆինգի վերաբերյալ կանոնակարգի վերամշակած տարբերակը ստորագրել էին 26 պետություն





# Կարգավորումը ՄԱԳՀ/ԱՀԿ-ում

1995 թ.-ին  
Ուրուգվայի փուլի  
արդյունքում  
ստորագրվեց նոր  
համաձայնագիր  
Հակադեմֆինգի  
վերաբերյալ

- Նոր Համաձայնագիրը պարտադիր է ԱՀԿ բոլոր անդամ պետությունների համար

Նոր համաձայնագրի անվանումը՝  
**Մաքսերի և առևտրի գլխավոր  
համաձայնագրի Հոդված VI-ի  
իրականացման մասին  
համաձայնագիր**

Նոր համաձայնագրի ոչ-  
պաշտոնական անվանումը՝  
**Հակադեմֆինգի մասին  
համաձայնագիր (ՀՄՀ)**




# Ոչ թե դեմփինգի արգելում, այլ հակադեմփինգի թուլյատրում

Պայմանավորվող կողմերն ընդունում են, որ դեմփինգը, ինչի միջոցով մի երկրի արտադրանքները մեկ այլ երկրի առևտրային շրջանակ են մտնում այդ արտադրանքների **(1) սովորականից ցածր արժեքով, (2) պետք է դատապարտվի,** եթե նյութական **(3a) վնաս է պատճառում** պայմանավորվող կողմի տարածքում հաստատված արդյունաբերական ճյուղին կամ **(3b) ստեղծում է նյութական վնասի վտանգ,** կամ **(3c) էականորեն կասեցնում է** ներքին արդյունաբերական ճյուղի ստեղծումը:


Գնագցումը փոխհատուցելու կամ կանխարգելելու համար պայմանավորվող կողմը **(4) կարող է ցանկացած գնագցող արտադրանքի նկատմամբ հակագնագցման տուրք գանձել,** որը չափով ավելի չէ, քան այդ ապրանքին վերաբերող գնագցման չափը:



# Ոչ թե դեմփինգի արգելում, այլ հակադեմփինգի թույլատրում




ԱՀԿ համաձայնագրերը կանոններ են սահմանում պետությունների համար, բայց ոչ ընկերությունների համար




Դեմփինգի իրականացման որոշումը ընդունում է ընկերությունը, բայց ոչ պետությունը



# Ոչ թե դեմփինգի արգելում, այլ հակադեմփինգի թույլատրում



ՄԱԳՀ/GATT -ը դատապարտում է, բայց չի արգելում (և չի էլ կարող արգելել) դեմփինգի իրականացումը ընկերությունների կողմից



Սակայն, ՄԱԳՀ/GATT -ը թույլ է տալիս պետություններին հակադեմփինգային միջոցներ կիրառել



# Հակադեմֆինգի կիրառման հիմքերը

Պայմանավորվող կողմերն ընդունում են, որ դեմֆինգը, ինչի միջոցով մի երկրի արտադրանքները մեկ այլ երկրի առևտրային շրջանակ են մտնում այդ արտադրանքների **(1) սովորականից ցածր արժեքով**, **(2) պետք է դատապարտվի**, եթե նյութական **(3a) վնաս է պատճառում** պայմանավորվող կողմի տարածքում հաստատված արդյունաբերական ճյուղին կամ **(3b) ստեղծում է նյութական վնասի վտանգ**, կամ **(3c) էականորեն կասեցնում է** ներքին արդյունաբերական ճյուղի ստեղծումը:

Գնագցումը փոխհատուցելու կամ կանխարգելելու համար պայմանավորվող կողմը **(4) կարող է ցանկացած գնագցող արտադրանքի նկատմամբ հակագնագցման տուրք գանձել**, որը չափով ավելի չէ, քան այդ ապրանքին վերաբերող գնագցման չափը:



# Հակադեմֆինգի կիրառման հիմքերը

Հակադեմֆինգային միջոցներ կիրառելու համար  
անհրաժեշտ է ապացուցել

## Դեմֆինգի առկայություն

--- մի երկրի արտադրանքները  
մեկ այլ երկրի առևտրային  
շրջանակ են մտնում այդ  
արտադրանքների  
**սովորականից ցածր  
արժեքով**

## Վնասի առկայություն

--- նյութական **վնաս է պատճառում**  
պայմանավորվող կողմի տարածքում  
հաստատված արդյունաբերական  
ճյուղին  
--- ստեղծում է նյութական վնասի **վտանգ**  
էականորեն  
--- **կասեցնում է** ներքին արդյունաբերական  
ճյուղի ստեղծումը



# Դեմփինգի առկայություն

Հակադեմփինգի  
մասին  
համաձայնագրի  
Հոդված 2

- **Քայլ 1:** Ապրանքների նմանության որոշում
- **Քայլ 2:** Արտահանման գնի որոշում
- **Քայլ 3:** Սովորական արժեքի որոշում
- **Քայլ 4:** Արտահանման գնի և սովորական արժեքի անաչառ համեմատություն (netting back)
- **Քայլ 5:** Դեմփինգի չափի և տոկոսային մեծության որոշում



# Քայլ 1. Ապրանքների նմանության որոշում

Ապրանքների “նմանության” սկզբունքը ԱՀԿ համաձայնագրերում

Արտաքին  
տնտեսական  
գործունեության  
ապրանքային  
անվանացանկ

- Համաշխարհային Մաքսային Կազմակերպության կողմից մշակած Ապրանքների նկարագրության և կոդավորման Հարմոնիզացված Համակարգը





# Քայլ 1. Ապրանքների նմանության որոշում

ԱՀԿ Հակադեմֆիինգի  
մասին  
համաձայնագրի  
Հոդված 2.6 և  
Հակազնագցման  
(հակադեմֆիինգային)  
և փոխհատուցման  
միջոցների մասին ՀՀ  
օրենքի Հոդված 3

## **Նման ապրանք՝**

ապրանք, որն իր բոլոր  
հատկանիշներով

## **նույնական է**

ու ումնա իրվող ապրանքի  
հետ կամ իր

հատկանիշներով **շատ մոտ է**

ու ումնա իրվող ապրանքի  
հատկանիշներին.



# Քայլ 1. Ապրանքների նմանության որոշում

ՀՀ Մաքսային Օրենսգրքի Հոդված  
75, 76 և 80

**Նույն** ապրանքներ են համարվում այն ապրանքները, որոնք **նույնական են բոլոր առումներով**, ներառյալ՝ ֆիզիկական հատկանիշները, որակը, համբավը (ապրանքային նշանը), ծագման երկիրը:

**Համանման են** համարվում միեւնույն երկրից ծագած այն ապրանքները, որոնք, նույնական չլինելով, ունեն նման հատկանիշներ եւ բաղադրանյութեր, որոնք հնարավորություն են տալի դրանք **կիրառել նույն նշանակությամբ եւ լինել փոխարինելի:**

**Նույն տե ակի** ապրանքներն այն ապրանքներն են, որոնք **պատկանում են տնտեսության որոշակի ճյուղի** կամ ենթաճյուղի արտադրանք համարվող ապրանքների խմբին եւ **ընդգրկում են նույն կամ համանման ապրանքներ:**



# Քայլ 1. Ապրանքների նմանության որոշում

ՀՀ Մաքսային օրենսգրքում և Հակադեմփինգի մասին ՀՀ օրենսդրությունում “Նմանության” սկզբունքը սահմանումը միատեսակ չէ

**Նույն <**

Մաքս.  
Օր.

**Նման <**

Հակադեմփ.  
Օր.

**Համա <  
նման**

Մաքս. Օր.

**Նույն  
տեսակի**

Մաքս. Օր.



## Քայլ 2. Արտահանման գնի որոշում

Արտահանման գին՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման գինը արտահանող երկրում

Եթե **արտահանման գինը անհնար է որոշել**

- Արտահանման գործարքը պատշաճ ձևով փաստաթղթավորված չէ
- Ներմուծողը և արտահանողը փոխկապակցված են
- Արտահանման գինը արժանահավաստ չէ այլ պատճառներով

- ՀՄՀ Հոդված 2.3  
Արտահանման գինը որոշվում է ներմուծված ապրանքի անկախ գնորդի առաջին անգամ վերավաճառքի գնից



## Քայլ 3. Սովորական արժեքի որոշում

Սովորական արժեք՝ արտահանող երկրում **սովորական առևտրային գործառույթների** ընթացքում ձևավորված նման ապրանքի արժեքը

Երկու  
հիփոթեզ

- Առկա են հավաստի տեղեկություններ արտահանող երկրում նման ապրանքի արժեքի վերաբերյալ
- Արտահանող երկրում վաճառքը իրականացվում է սովորական առևտրային գործառույթների ընթացքում



## Քայլ 3. Սովորական արժեքի որոշում

- Եթե արտահանող երկրում սովորական առևտրային գործառույթների շրջանակում նման ապրանք չի վաճառվում
- Եթե արտահանող երկրում նման ապրանքի վաճառքը կատարվում է խիստ փոքր ծավալներով

Երկու  
լուծում՝  
ՀՄՀ  
Հողված  
2.2

- Երրորդ երկիր նման ապրանքի արտահանման համեմատելի գինը
- Հաշվարկված արժեքը = Արտադրության ծախսեր + Իրացման ծախսեր + Սովորաբար ստացվող շահույթ



## Քայլ 4: Արտահանման գնի և սովորական արժեքի անաչառ համեմատություն

ՀՄՀ Հոդված 2.4  
սահմանում է  
անաչառ  
համեմատության  
հիմնական  
սկզբունքները

- Գործարքի **միևնույն փուլ** – Ապրանքի արժեքը գործարանից դուրս առաքելու պահին
- Գործարքի **միևնույն ժամանակ** – Միևնույն ժամանակում կատարած գործարքներ



## Քայլ 4: Արտահանման գնի և սովորական արժեքի անաչառ համեմատություն

Արտադրանքը ներմուծող երկրի առևտրային շրջանակ է մտնում **սովորականից ցածր արժեքով**

Եթե սովորական առևտրային գործառույթների ընթացքում

$P_e <$  արտահանող երկրում **նման** արտադրանքի  $P_d$

Եթե սովորական առևտրային գործառույթների ընթացքում

$P_e <$  **նման** արտադրանքի  $P_e$  դեպի երրորդ երկիր

$P_d$ ՝ արտահանող երկրում ներքին գնի բացակայութ. դեպքում

Եթե  $P_e <$  Արտադրանքի արտադրության ծախսերը + Շահույթի համար արված խելամիտ ավելացումը ծագման երկրում





## Քայլ 4: Արտահանման գնի և սովորական արժեքի անաչառ համեմատություն

Տարբերությունները որոնք կարող են ազդել գների համեմատության վրա

- Վաճառքի գործարքի պայմանները
- Հարկման և ֆիսկալ փոխհատուցումների պայմանները
- Գործարքի ծավալները
- Տրանսպորտային , ապահովագրական և այլ օժանդակ ծախսերի առկայությունը



## Քայլ 5: Դեմփինգի չափը և տոկոսային մեծությունը

**Դեմփինգի չափ** = Սովորական արժեքի – Արտահանման գին

- Ապրանքի սովորական արժեք - 100
- Ապրանքի արտահանման գին - 80
- Դեմփինգի չափ - 20
- Դեմփինգի **տոկոսային մեծությունը**  
 $20/80 \times 100 = 25\%$ .



## Վնասի առկայություն

Հակադեմֆինգի  
մասին  
համաձայնագրի  
Հոդված 3

- **Քայլ 6:** Վնաս կրած տնտեսության ճյուղի որոշում
- **Քայլ 7:** Վնասի ուսումնասիրություն
- **Քայլ 8:** Պատճառահետևանքային կապի որոշում
- **Քայլ 9:** Հակադեմֆինգային միջոցների / տուրքերի կիրառում



## Քայլ 6: Վնաս կրած տնտեսության ճյուղի որոշում

Արտադրողների ամբողջությունը, որոնք արտադրում են ուսումնասիրվող ապրանքին նման ապրանքներ ներմուծող երկրում

Վնաս կրած  
տնտեսական  
ճյուղը չի  
ներառում

- Ներքին արտադրողների հետ կապված ներմուծողները և արտահանողները
- Տվյալ ապրանքի ներմուծողները



## Քայլ 7: Վնասի ուսումնասիրություն

**Առկա վնասը**  
գնահատելիս  
պետք է հաշվի  
առնվեն բոլոր  
հնարավոր  
տնտեսական  
գործոնները և  
ցուցանիշները

- Վաճառքի ծավալների, թողարկած արտադրանքի, շուկայում ունեցած բաժնեմասի անկումը
- Շահույթների, ներդրումների վերադարձելիության անկումը
- Ներքին գների իջեցումը
- Զբաղվածության, աշխատավարձի, արտադրության աճի վրա բացասական ազդեցությունը



## Քայլ 7: Վնասի ուսումնասիրություն

### Վնասի վտանգը

գնահատելիս  
պետք է հաշվի  
առնվեն  
հետևյալ  
տնտեսական  
գործոնները և  
ցուցանիշները

- Ներմուծման ծավալների զգալի աճի հնարավորությունը
- Ներմուծման գների ներմուծող երկրում գների վրա ազդեցության հնարավորությունը
- Արտահանողի կարողությունների էական աճը



## Քայլ 8: Պատճառհետևանքային կապի որոշում

Պետք է որոշել արդյոք վնասի առաջացման պատճառները դեմփինգն է, թե այլ գործոնները

- Ոչ դեմփինգային ներմուծումների ծավալները և գները
- Պահանջարկի իջեցումը
- Ներքին և օտարերկրյա արտադրողների միջև մրցակցությունը
- Արտադրական տեխնոլոգիաների զարգացումը
- Ներքին տնտեսական ճյուղի արտադրողականությունը



## Քայլ 9: Հակադեմֆինգային միջոցների / տուրքերի կիրառում

Հակադեմֆինգային տուրքի չափը չպետք է գերազանցի դեմֆինգի չափը

Հակադեմֆինգային միջոցները կարող են կիրառվել 5 տարի ժամկետով

Ուսումնասիրությունների ընթացքում` **նախնական եզրակացության** հիման վրա կարող են կիրառվել **ժամանակավոր** հակադեմֆինգային միջոցներ / տուրքեր ուսումնասիրության ընթացքում պատճառած վնասների կանխման նպատակով





# Հակադեմֆինգային ուսումնասիրություն

Ուսումնասիրությունը կարող է նախաձեռնել

- Լիազոր մարմինը
- Տնտեսության ճյուղը

Լիազոր մարմինը պարտավոր է ստուգել տնտեսության ճյուղի ներկայացրած դիմումում առկա **փաստերի հավաստիությունը**

Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է **ծանուցվեն** ուսումնասիրության սկսվելու վերաբերյալ

Ուսումնասիրության տևողությունը չի կարող գերազանցել **18 ամիս** (Հայաստանում՝ 12 ամիս)

Ուսումնասիրությունը կարող է դադարեցվել արտահանողի կողմից **կամավոր պարտականություններ** ստանձնելու պարագայում



# Հակադեմֆինգային ուսումնասիրություն

## Տնտեսական ճյուղի նախաձեռնությամբ ուսումնասիրությունը կարող է սկսվել

Եթե դիմումին կողմ են արտահայտված նման ապրանքի ներքին արտադրողների համատեղ արտադրությունը կազմում է դիմումին կողմ կամ դեմ արտահայտվածների 50 % ավելին

Միաժամանակ, դիմումին կողմ արտահայտվածների համատեղ արտադրությունը պետք է գերազանցի ճյուղի ընդհանուր արտադրանքի 25 %



# Հակադեմֆինգային ուսումնասիրություն

Ենթադրենք առկա է 2 տեղական արտադրող՝ X և Y

- **X-ը** արտադրում 3500 տոննա արտադ.
- **Y-ը** արտադրում 6500 տոննա արտադ.

Եթե **X-ը** ներկայ. դիմում,

իսկ **Y-ը** ոչ կողմ է ոչ էլ դեմ

- **50 %-ի** պահանջը բավարարվում է, որովհետև **X-ը** ներկայացնում է դիմումին կողմ կամ դեմ արտահայտվածների **100 %**
- **25 %-ի** պահանջը նույնպ. բավարարվում է, որովհետև **X-ը** ապահովում է ընդհանուր արտադրանքի **35 %**

Այնուամենայնիվ, եթե **Y-ը** արտահայտվեր դեմ **50 %-ի** պահանջը չի բավարարվի, որովհետև **X-ը** կներկայացներ կողմ կամ դեմ արտահայտվածների ընդամենը **35 %**



# Հակադեմֆինգը Հայաստանում

2002 թ.-ին ընդունվել է  
Հակազնագցման  
(հակադեմֆինգային)  
և փոխհատուցման  
միջոցների մասին ՀՀ  
օրենքը

- Օրենքի դրույթները հիմնականում կրկնում են ԱՀԿ շրջանակներում ստորագրված Հակադեմֆինգի մասին համաձայնագիրը (ՀՄՀ)

Լիազոր մարմին է  
ճանաչվել  
**Էկոնոմիկայի  
նախարարությունը**

- Լիազոր մարմնի նախաձեռնությամբ մշակվել է նաև ՀՀ Կառավարության որոշում Ապրանքի սովորական արժեքի որոշման համար անհրաժեշտ տեղեկությունների ստացման կարգի վերաբերյալ



# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՋՈՑ(ԱՌՈՒՄ)ՆԵՐ

Հակազնազցման

**Փոխհատուցման**

Պաշտպանական



# Մահմանումներ

Սուբսիդիա = Լրավճար =  
Աջակցության միջոց

Արգելված սուբսիդավորում  
ստացած ընկերությունների  
հանդեպ կարելի է կիրառել  
**Փոխհատուցման** միջոցներ =  
**Հակալրավճարային** միջոցներ



# Սուբսիդիայի սահմանումը

Հակազնազցման  
(հակադեմփինգային)  
և փոխհատուցման  
միջոցների մասին

ՀՀ օրենքի

Հոդված 18, Մաս 1

(կիրառվել է  
ՄԱԳՀ/GATT  
Հոդված 16.1-ի  
լեզուն)

Սույն օրենքի իմաստով գոյություն ունի լրավճար, եթե առկա է արտահանող երկրի կառավարության տրամադրած **ֆինանսական օժանդակություն** կամ **որել ձեռովարտահայտված եկամտային** կամ **զնային օժանդակություն** (որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է **մեծացնել** տվյալ երկրի տարածքից ապրանքի **արտահանման ծավալները** կամ **նվազեցնել** տվյալ երկրի տարածք ապրանքի **ներմուծման ծավալները**), եւ դրանց արդյունքում օգուտ է տրվում օժանդակություն ստացողին:



# Մուբսիդիայի ձևերը

ԱՀԿ Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիր (ԼՓՄմՀ)

Դրամական միջոցների ուղղակի փոխանցում

դրամաշնորհների, վարկերի տրամադրում

Դրամական միջոցների կամ պարտավորությունների հնարավոր ուղղակի փոխանցում

վարկային երաշխիքների տրամադրում

Պետական եկամուտների սահմանափակ հավաքագրում, որն այլ դեպքում պետք է հավաքվեր

Ֆիսկալ խրախուսման միջոցները՝ հարկային արտոնությունների տրամադրման տեսքով





## Սուբսիդիայի ձևերը

ԱՀԿ Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիր (ԼՓՄՄՀ)

Ապրանքների վաճառք կամ անհատույց տրամադրում կամ ծառայությունների մատուցում, որոնք ընդհանուր ենթակառուցվածքային բնույթի չեն

Կառավարությունը հանձնարարում է որեւէ կազմակերպության՝ իրականացնելու վերը նկարագրված կետերում նշված գործառույթներից մեկը կամ մի քանիսը



# Սուբսիդիա և դեմփինգ

ՄԱԳՀ/GATT

Հոդված VI.5

Արտադրանքը  
**միաժամանակ**  
**հակազնագցման և**  
**փոխհատուցման**  
**տուրքի** չի կարող  
ենթարկվել նույն  
իրավիճակի  
փոխհատուցման  
համար:

**Սուբսիդիա** (լրավճար) -  
կառավարության օժանդակություն  
տեղական ընկերություններին, որի  
հետևանքով արտահանման գները  
նվազում են և արտահանման  
ծավալները աճում

**Դեմփինգ** (զնագցում)  
կազմակերպության  
նախաձեռնությամբ ապրանքի  
սովորական արժեքից ցածր գնով  
արտահանում



## Կարգավորումը ՄԱԳՀ/ԱՀԿ-ում

1947 թ.-ին հաստատված ՄԱԳՀ / GATT  
Հոդված VI և XVI սահմանում են  
ընդհանրական նորմեր փոխհատուցման  
միջոցների և սուբսիդիաների վերաբերյալ



1979 թ.-ին Տոկիո փուլի ընթացքում  
ստորագրվեց համաձայնագիր  
փոխհատուցման միջոցների մասին, որին  
միացան 24 պետություն



1995 թ.-ին Ուրուգվայի փուլի արդյունքում  
ստորագրվեց Լրավճարների և փոխհատուցման  
միջոցների մասին համաձայնագիրը (ԼՓՄՄՀ),  
որը պարտադիր է ԱՀԿ անդամ երկրների համար



## Սուբսիդիան ՄԱԳՀ/GATT-ում

GATT/  
ՄԱԳՀ  
Հոդված  
XVI

Չի պարունակում «սուբսիդիա»  
հասկացության **հատակ սահմանում**

Պարտադրում է ԱՀԿ անդամ երկրներին  
**տեղյակ պահել** ԱՀԿ այլ անդամներին  
սուբսիդիաների կիրառման վերաբերյալ

Պարտադրում է սուբսիդավորում կիրառող  
երկրներին **սկսել բանակցություններ**  
հետաքրքրված այլ երկրների հետ  
սուբսիդավորման ծավալների կրճատման  
վերաբերյալ:

Չի սահմանում հատակ պահանջներ  
սուբսիդավորման **կրճատման** ուղղությամբ



# Սուբսիդիան ՄԱԳՀ/GATT-ում

GATT/  
ՄԱԳՀ  
Հոդված  
XVI

Փոխհատուցման տուրքերի ծավալը **չի կարող գերազանցել** լրավճարի ծավալը

Փոխհատուցման միջոցների կիրառումը հնարավոր է միայն **սեփական տնտեսության վնաս** կրելու փաստի առկայության պարագայում:

**Z** երկրի սուբսիդավորված ապրանքի **Y** երկրին վնաս հասցնելու դեպքում, **X** երկիրը կարող է կիրառել փոխհատուցման միջոցներ **Z** երկրից ապրանքի ներմուծման հանդեպ, եթե **X** երկիրը այդ նույն ապրանքը ներմուծում է նաև **Y** երկրից



# Սուբսիդավորումը գյուղատնտեսությունում

Առևտրային **“սրտեկցիոնիզմը”**  
սուբսիդավորման հետ կապված ավելի ուժեղ է  
գյուղատնտեսության բնագավառում

- ԱՀԿ շրջանակներում ստորագրված **Գյուղատնտեսության մասին համաձայնագիրը** (ԳՄՀ) մանրամասն անդրադառնում է սուբսիդավորման հետ կապված հարցերին
- ԳՄՀ նԼՓՄմՀ կամ ԳՄՀ ն ՄԱԳ-Հ/GATT միջև հակասությունների պարագայում ԳՄՀ համաձայնագիրը ունի **ավելի բարձր իրավաբանական ուժ**



## Սուբսիդիան ԾԱԳՀ/GATS-ում

### ԾԱԳՀ/ GATS Հոդված XV

- ԾԱԳՀ/GATS-ը միայն նախատեսում է, որ **հետագայում պետք է մշակվեն իմպերատիվ նորմեր** Ծառայությունների առևտրի բնագավառում սուբսիդիաների և փոխհատուցման միջոցների կարգավորման նպատակով:
- Սուբսիդիայի հետևանքով վնաս կրող երկիրը կարող է **խորհրդակցություններ իրականացնելու պահանջ** ներկայացնել սուբսիդիա տրամադրող երկրին:
- Ի տարբերություն փոխհատուցման միջոցների **հակադեմփինգը** ընդհանրապես հիշատակված չէ ԾԱԳՀ/GATS-ում



## Սուբսիդիան ԼՓՄՎՀ-ում

ԼՓՄՎՀ-ն նպատակ չունի սահմանափակել կառավարությունների իրավունքը հատկացնել սուբսիդիաներ

ԼՓՄՎՀ-ն նպատակ ունի **արգելել առևտրին խոչընդոտող** և տնտեսությանը վնաս հասցնող սուբսիդիաները

ԼՓՄՎՀ-ն տալիս է սուբսիդիա հասկացության սահմանում





# ԼՓՄՆՀ Ծածկույթը

Սուբսիդիաների  
տեսակները

Արգելված

Փոխհատուցելի

Ոչ փոխհատուցելի

Փոխհատուցման  
միջոցառումների  
կիրառման  
ընթացակարգը

Ուսումնասիրության  
նախաձեռնությունը և  
իրականացման կարգը  
Վնասի և պատճառահետևանքային  
կապի առկայության հիմնավորումը  
Սուբսիդիա ստացողի օգուտի և  
փոխհատուցման տուրքի չափի  
որոշում



# Արգելված սուբսիդիաներ

ԼՓՄՆՀ

Հոդված 3

## Արտահանման սուբսիդիաները

(բացառությամբ գյուղատնտեսության ոլորտում, ըստ Գյուղատնտեսության վերաբերյալ ԱՀԿ Համաձայնագրի)

Սուբսիդիաներ, որոնք տրամադրվում են արտադրության ընթացքում **տեղական արտադրանքի** (**\_ունքի**) **օգտագործման մինիմալ ծավալների** պայմանով



# Փոխհատուցելի լրավճարներ


ԼՓՄՎՀ Հոդված 2. Միայն **Հատուկ** լրավճարներն են փոխհատուցելի

**Հատուկ** են այն սուբսիդիաները, որոնք տրամադրված են

հատկորոշված կազմակերպությունների հատկորոշված արդյունաբերական ճյուղերին սահմանազատված աշխարհագրական տարածքում գտնվող կազմակերպությունների համար



# Ոչ փոխհատուցելի սուբսիդիաներ





# Սուբսիդիավորումը Հայաստանում

2002 թ.-ին ընդունվել է  
Հակազնազցման  
(հակադեմփինգային)  
և փոխհատուցման  
միջոցների մասին ՀՀ  
օրենքը

- Օրենքի դրույթները հիմնականում կրկնում են ԱՀԿ շրջանակներում ստորագրված ԼՓՄՄՀ դրույթները

Լիազոր մարմին է  
ճանաչվել  
**Էկոնոմիկայի  
նախարարությունը**

- Գյուղատնտեսությանը տրամադրվող սուբսիդիաների / աջակցության միջոցների գծով Լիազոր մարմին է ճանաչվել Գյուղատնտեսության նախարարությունը



## Սուբսիդավորումը հայաստանում

Հայաստանի կառավարությունը պլանավորել է սուբսիդավորման (լրավճար տրամադրելու) միջոցով փոխհատուցել ԱԱՀ-ի գծով արտոնության վերացմամբ պայմանավորված տեղական գյուղացիական տնտեսությունների հնարավոր կորուստները



# Սուբսիդավորումը հայաստանում

2005 թ. հոկտեմբերի 27-ի  
ՀՀ Կառավարության  
որոշում

- Գյուղատնտեսական սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների հայեցակարգը

2007 թ. փետրվարի 22-ի  
ՀՀ Կառավարության  
որոշում

- Գյուղատնտեսական գործունեությունն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների սուբսիդավորման *(ժամանակավոր)* կարգ

2008 թ. հունիսի 12-ին  
ՀՀ Կառավարության  
որոշում

- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական նախագիծ



# Սուբսիդավորումը հայաստանում

2008 թ. փետրվարի 7-ին  
ՀՀ Կառավարությունը  
հաստատել է  
գյուղատնտեսական  
հողօգտագործողներին  
պետական  
աջակցության կարգը

- Գյուղատնտեսության  
նախարարության և  
Հայփոստ ՓԲԸ-ի միջև  
արդեն իսկ կնքվել է  
պայմանագիր նշված  
ծրագրով  
նախատեսված  
գումարները բաշխելու  
վերաբերյալ





# Սուբսիդավորումը հայաստանում

Գյուղատնտեսական  
հողօգտագործող-  
ներին պետական  
աջակցության  
կարգը

- Պետական աջակցության օբյեկտ չեն համարվում տնամերձ հողատարածքները և 7 հեկտարից ավելի մշակովի հողատարածքները
- 1 հեկտար մշակովի հողատարածքի հաշվով տարեկան սուբսիդավորման գումարը կազմում է 35.000 դրամ, բացառությամբ`
  - պտղատու ծառերի և խաղողի բերքատվության մեջ մտնելուց հետո` 17.500 դրամ / տարեկան
  - բազմամյա կերային մշակաբույսերի նախորդ տարիների ցանքերի համար` 17.500 դրամ / տարեկան



# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՋՈՑ(ԱՌՈՒՄ)ՆԵՐ

Հասկազնագրման

Փոխհատուցման

Պաշտպանական



## Պաշտպանական միջոցների նպատակը

ԱՀԿ համաճայնագրերի նպատակն է խրախուսել միջազգային առևտուրը վերջինիս կանոնների ազատականացման միջոցով

ՄԱԳՀ / ԱՀԿ ազատականացման արագ տեմպերը կարող էին առաջացնել մեծ դժգոհության շահառուների տառեռեռ խմբերի շոջանում

Անհրաժեշտ էր ստեղծել «գոլորշին բաց թողնելու» մեխանիզմ

ՄԱԳՀ Հոդված XIX-ը դիտարկվում է, որպես Safe a e՝ «Անվտանգության փական»



## Կարգավորումը ՄԱԳՀ/GATT-ում

### GATT/ ՄԱԳՀ Հոդված XIX

Եթե **անկանխատեսելի զարգացումների** հետևանքով որևէ արտադրանք այդ պայմանավորվող կողմի տարածք է ներմուծվում այնպիսի **աճող քանակներով** և այնպիսի պայմաններով, որ **լուրջ վնաս է** հասցնում այդ տարածքում գտնվող՝ նման կամ ուղղակիորեն մրցակից արտադրանքների ներքին արտադրողներին՝ ապա պայմանավորվող կողմն ազատ է այդ արտադրանքի առնչությամբ **ժամանակավորապես դադարեցնել պարտավորությունը՝** այն չափով և այնքան ժամանակ, որքան կարող է անհրաժեշտ լինել այդ վնասը կանխելու կամ հատուցելու համար:



## Կարգավորումը մինչ 1995 թ.

Մինչ Ուրուգվայի փուլի ավարտը երկրները **հաճախ չէին կիրառում** պաշտպանական միջոցներ

Սակայն պաշտպանական միջոցների կիրառման վտանգի ներքո երկրները GATT շրջանակներից դուրս կնքում էին **արտահանման «կամավոր» սահմանափակման** վերաբերյալ համաձայնագրեր (**գորշ միջոցառումներ**)



# Պաշտպանական միջոցների մասին ԱՀԿ Համաձայնագիր (ՊՄՎՀ)

ՊՄՎՀ-ն նպատակ ունի Պարզաբանել և  
մանրամասնել ՄԱԳՀ/ GATT Հոդված XIX

Կանխել պաշտպանական բնույթի միջոցառումների  
ինքնակամ կիրառումը ԱՀԿ անդամ պետությունների  
կողմից

ՊՄՎՀ-ն արգելեց «Գորշ գոտիի»  
միջոցառումները

«Գորշ գոտիի» միջոցառումների վերաբերյալ կնքած  
երկկողմանի համաձայնագրերը ուժը կորցրեցին 1998 թ.-  
ին



# Պաշտպանական միջոցների տեսակները

Քանակական  
սահմանափակումներ  
(քվոտաներ)

Սահմանված  
մակարդակից բարձր  
մաքսատուրքեր

Հավելյալ վճարների  
գանձում

Ներմուծման  
թույլատվությունների  
տրամադրում



## Պաշտպանական միջոցների մասին ԱՀԿ Համաձայնագիր (ՊՄՎՀ)

**ՊՄՎՀ-ն չի մանրամասնում և պատշաճ  
մեկնաբանում** անկանխատեսելի  
գարգացումների, ներնուծման աճող քանակներ և լուրջ  
վնաս հասկացությունները

Ի տարբերությունը հակադեմփինգային և  
փոխհատուցման միջոցների պաշտպանական  
միջոցների կիրառման համար **անհրաժեշտ չէ  
բացահայտել «անարդար» առևտրային նախադեպ**

Այդ դեպքում արդյո՞ք վտանգ չի առաջանա, որ  
պետությունները իրենց ներքին արտադրողներին  
պաշտպանելու համար ինքնակամ և լայն մեկնաբանության  
ներքո կկիրառեն ՊՄՎՀ-ն





# Պաշտպանական միջոցները ԱՀԿ այլ համաձայնագրերում

Պաշտպանական միջոցները կիրառվում են բոլոր ապրանքների համար

Հատուկ դրույթներ են սահմանված

Գյուղատնտեսության մասին համաձայնագրում (SSG նշում)  
Մանածագործվածքների և հագուսների մասին համաձայնագրում (ուժը կորցրել է 2004 թ.-ի Դեկտեմբերի 31-ին)

Չինաստանի անդամակցության համաձայնագիր (գործում է անդամակցությունից 12 տարվա ընթացքում)



# Պաշտպանական միջոցները ԾԱԳՀ/GATS-ում

ԾԱԳՀ/GATS-ը չի անդրադառնում պաշտպանական միջոցների կարգավորմանը վերաբերող խնդիրներին

Սակայն, ԾԱԳՀ/GATS հոդված XX նախատեսում է բանակցությունների իրականացում այդ ուղղությամբ



# Պաշտպանական միջոցների մասին համաձայնագիր

Պաշտպանական միջոցների կիրառումը  
**չպետք է գերազանցի 4 տարին**

Եթե հիմնավորվում է, որ տեղական  
արդյունաբերությունը շարունակում է  
վնասներ կրել, այդ միջոցառումները կարող են  
**երկարաձգվել ևս 4 տարով**

Նոր պաշտպանական միջոցները **չեն կարող  
լինել ավելի արտակցիոնիստական** նախորդի  
համեմատ



## Պաշտպանական միջոցների մասին համաձայնագիր

Միևնույն ապրանքի նկատմամբ նոր պաշտպանական միջոցների կիրառումը կարող է իրականացվել միայն կիրառման ժամանակահատվածին հավասար դադարից հետո, քայց ոչ 2 տարուց շուտ **c g ff**

Մինչև 180 օր պաշտպանական միջոցների կիրառումը կարող է իրականացվել 1 տարուց հետո, եթե նույն ապրանքը չի ենթարկվել պաշտպանական միջոցառումների 2 անգամից ավել 5 տարվա ընթացքում



# Ժամանակավոր պաշտպանական միջոցներ

Պաշտպանական միջոցների կիրառման հետաձգումը որոշ դեպքերում կարող է հանգեցնել **անվերականգնելի վնասների** առաջացմանը

**Ժամանակավոր**  
պաշտպանական  
միջոցներ

կարող են կիրառվել առանց պաշտպանական միջոցների կիրառման անհրաժեշտության **զնահատման**

կարող են կիրառվել **մաքսիմում 200 օր** երկարությամբ

որպես պաշտպանական միջոց կարող է կիրառվել միայն **մաքսատուրքերի բարձրացումը**

եթե հետագա հետաքննությունը ցույց տա, որ պաշտպանական միջոցների կիրառումը հիմնված էր ոչ օբյեկտիվ փաստարկների վրա, ներմուծողների կրած **վնասները պետք է փոխհատուցվեն**



## Չարգացող երկրների համար հատուկ պայմաններ

Պաշտպանական միջոցների կիրառումը մինչև 10 տարի ժամկետով

Շրջափոխության ժամանակահատվածը նախատեսվածից 2 անգամ կարճ

Չարգացած երկրները չեն կարող կիրառել պաշտպանական միջոցներ զարգացող երկրներից ներմուծման հանդեպ, եթե

զարգացող երկրների ներմուծումը կազմում 3 %-ից ոչ ավել յուրաքանչյուր երկրի համար

եթե զարգացող երկրներից ընդհանուր ներմուծումը կազմում 9 % քիչ մասը ընդհանուր ներմուծման մեջ



# Պաշտպանական միջոցները Հայաստանում

2002 թ.-ին ընդունվել է Ներքին շուկայի պաշտպանության մասին ՀՀ օրենքը

- Օրենքի դրույթները հիմնականում կրկնում են ԱՀԿ շրջանակներում ստորագրված Պաշտպանական միջոցների մասին համաձայնագրի դրույթները

Լիազոր մարմին է ճանաչվել **Էկոնոմիկայի նախարարությունը**

- Լիազոր մարմնի նախաձեռնությամբ մշակվել է նաև ՀՀ Կառավարության որոշում Քանակական սահմանափակումների և սակագնային քվոտաների կիրառման դեպքում ներմուծման թույլտվությունների տրամադրման կարգի վերաբերյալ



# Շնորհակալություն

